ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 26 ապրիլի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ՝ Ռ.Պապայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Հ.Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

Ռ. Թորոսյանի ներկայացրած փաստաթղթերը վկայում են, որ նա մինչ այդ դիմում է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, խնդրելով Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անգործությունը ճանաչել անվավեր եւ պարտադրել նրան միջոցներ ձեռնարկել՝ «Արմենիա» հեռուստաընկերության կողմից ՀՀ օրենսդրության պահանջների խախտման հետեւանքների վերացման ուղղությամբ: Դատարանը մերժել է դիմումի ընդունումը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 եւ 145 հոդվածներով, նաեւ սահմանելով, որ որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով: Քաղաքացու վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է եւ վերացրել առաջին ատյանի վերոհիշյալ որոշումը: Նկատի ունենալով վճռաբեկ դատարանի սույն որոշումը, ա.թ. մարտի 27-ին գործը վերստին քննության է առնվել Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում: Դատարանը մերժել է դիմումը, այս անգամ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, ինչպես նաեւ այդ օրենսգրքի 24 գլխում ներառված 154 եւ 155 հոդվածներով: Համաձայն վերջին երկու հոդվածների, որոշման եզրափակիչ մասում դատարանը նաեւ նշել է, որ վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա չէ բողոքարկման: Այս հանգամանքը հիմք է հանդիսանում՝ համարելու քաղաքացու դատական պաշտպանության միջոցները սպառված:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Ռ. Թորոսյանի դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի, մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխում տեղ գտած հոդվածների դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Ռ. Թորոսանի դիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ